Հ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈԴՎԱԾԸ ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպանվող «Կովկասի Հայոց հրատարակչական ընկերության» ֆոնդում աշխատելիս մեր ուշադրությունը գրավեց մի ձեռագիր հոդված, որը կրում է «Բուդդայականության ազդեցությունը» խորագիրը: Յուրաքանչյուր ոք, ով երբևիցե թերթել է խորհրդային նշանավոր պատմաբան, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հակոբ Համազասպի Մանանդյանի (1873—1952) ձեռագրերը, ապա առանց որևէ կասկածի կարող է հաստատել, որ բուդդայականությանը նվիրած սույն հոդվածը պատկանում է նրա գրչին: Նույն խնամքով, մարգարտաշար, գեղեցիկ ու հստակ ձեռագիրն է, ձեռագիր, որն անհնարին է շփոթել: Թերևս փոքր-ինչ վարանման տեղիք է տալիս հոդվածի հեղինակի ազգանունը՝ Հ. Մենենդյանց: Մեր կասկածները փարատելու համար դիմեցինք հայտնի ձեռագրագետ, պրոֆ. Պ. Հ. Հակոբյանին, որը ոչ միայն հաստատեց ձեռագիրը Հ. Հ. Մանանդյանին պատկանելու հանգամանքը, այլև հայտնեց, որ Ախալցխայում Մանանդյան ազգանվան ձևը հընչել և օգտագործվել է նաև Մենենդյան ձևով, և որ Մանանդյանների ընտանիքը նախապես անվանվել է Մենենդյանց: Այս հանգամանքը որևէ կերպ փաստարկելու ակնկալությամբ ապացույցներ փնտրեցինք Հ. Մանանդյանի՝ Մատենադարանում գտնվող թղթոնի փաստաթղթերում: Երբ թվում էր, թե մեր փնտրտուքներն ավարտվելու են անարդյունք, ուշադրություն դարձրեցինք 1895 թ. Լայպցիգում կատարված մի լուսանկարի[1]: Սա խմբանկար է, ուր պատկերված են Գերմանիայում սովորող հայ ուսանողների ընկերակցության («Հայոց ճեմարանական ընկերություն») մի խումբ անդամներ: Կենտրոնում նստածը Ենայի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող, Լայպցիգի ու Ստրասբուրգի համալսարանների արևելագիտական ու լեզվաբանական դասընթացների ունկնդիր Հակոբ Համազասպի Մանանդյանն է: Լուսանկարի վրա Հ. Մանանդյանը նշել է բոլոր նրանց ազգանունները, ովքեր պատկերված են խմբանկարում[2]: Իր ազգանունն այստեղ Հ. Մանանդյանը գրել է Մենենդյանց ձևով: Այլևս կասկած լինել չի կարող, որ նորահայտ հոդվածի հեղինակ Հ. Մենենդյանցը և հետագայի նշանավոր Հ. Մանանդյանը նույն անձնավորությունն են: Այսպիսով պարզվեց Հ. Մանանդյանի կենսագրության մի կարևոր մանրամասն:

Ինքնին հասկանալի է, որ անցյալի մեր երախտավորների յուրաքանչյուր նորահայտ էջ, նամակ, հոդված առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում. դրանք ամբողջացնում են նրանց գիտական ժառանգությունը, ճշտում կենսագրության առանձին, չլուսաբանված էջեր: Նշելի է, որ մենք համարյա ոչինչ չգիտենք նաև Մանանդյանի ուսանողական տարիների մասին: Նորահայտ հոդվածն այս տեսակետից շատ կարևոր է: Սրանից ինչ-որ չափով կարելի է պատկերացում կազմել ուսանող Մանանդյանի ուսումնառության, հետաքրքրությունների աշխարհայացքի, գիտելիքների բազմազանության մասին:

Հ. Մանանդյանի նորահայտ ձեռագիրը լավ է պահպանված: Հոդվածի գրության տարեթիվը ճշտվում է ձեռագրի առաջին էջի աջ անկյունի մակագրությամբ՝ «Ստացված է 8 Նոյեմբերի, 95 թ.»: Դժբախտաբար հնարավոր չեղավ պարզել, թե ով է եղել հոդվածի հասցեատերը, և ինչու այն լույս չի տեսել:

---

[1] Տե՛ս Մ. Մաշտոցի անվան մատենադարանի արխիվային բաժին, ակադեմիկոս Հ. Հ. Մանանդյանի ֆոնդ, թ. 228, վ. 387:

[2] Առաջին շարքում նստած են ձախից աջ՝ Հախումյան, Աբովյան, Մինասյան (հատակին), Մենենդյանց, Նալբանդյան, Խոջայան, երկրորդ շարքում կանգնած են ձախից աջ՝ Սեղբոսյան (Ծանթ), Ծամտանճյան, Պողոսյան, Բունիաթյան, Ղուկասյան, Չարըրճյան (լուսանկարը տպագրվում է առաջին անգամ):



Հոդվածի բնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Կովկասի Հայոց հրատարակչական ընկերության ֆոնդում (բաժին I, № 25):

Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

(Բուդդան, բրահմանականությունն և բուդդայականության բովանդակությունը և նրանց ազդեցությունը XIX դարի փիլիսոփայության վրա)

Նշանաբան՝

«Առողջ մտքի վրա հիմնված կրոնը պահանջում է, որ մարդիկ ճանաչեն բնության օրենքները և նրանց համեմատ կարգավորեն իրենց կյանքը,— դրա հակառակ եկեղեցական կրոնի մահամերձ սնոտիապաշտությունը հրամայում է, որ մարդիկ թողնեն բնությունը, արհամարհեն նրա ճշմարտությունները և հրնազանդվեն իշխողասեր հոգևորականության օրենքներին»:

Haekel[1]
Հեկկել

Տասնվիններորդ դարը մեծ գյուտերի և արագընթաց առաջադիմության դար է։ Մինչև տասնվեցներորդ դարը մարդկության աշխարհայեցությունը շատ սահմանափակ էր։ Բնությունն իր զանազան երևույթներով հազար ու մեկ

հանելուկ էր նրա համար։ Յուրաքանչյուր անբացատրելի երևույթ հրաշք էր անվանվում և մի որևէ առասպելական ձևով բացատրվում։

Տասնվեցերորդ դարից սկսած երևան են գալիս մի շարք գիտնականներ, որոնք բնության օրենքներին ծանոթանալու համար խորամուտ են լինում նրանց մեջ։ Այդ գիտնականների աշխատանքները անօգուտ չեն անցնում։ Ցնծության աղաղակներով տարածվում է ի լուր աշխարհի, որ բնության մեջ կամայականության և անիշխանության փոխարեն հաստատ և անփոփոխելի օրենքներ են իշխում։ Այդ ճշմարտության հետ միասին երևան է գալիս և աշխարհի զարգացման (Evolution) վարդապետությունը[2]։ Հիշած երկու նոր գյուտերը գիտությունների և կյանքի յուրաքանչյուր անկյունում մի մեծ հեղափոխական շարժում են առաջ բերում։ Հին կրոնական փիլիսոփայությունը, բոլոր գիտությունների հպարտ և չքնաղ մայրը, բնագիտական գիտությունների արհամարհված դուստրն է դառնում։ Բայց երկար չէ տևում այդ դրությունը. արհամարհված դուստրը ուշադրությամբ լսում է իր ծնողների խրատները և խնամքով քավում իր հին մեղքերը։ Նոր փիլիսոփայությունը, հաստատ մնալով իր ծնողների դաստիարակությանը, քար ու քանդ է անում հին առասպելական աշխարհայեցությունը և նորերումս մի մեծ քար է ձգում դեպի հին աստվածների քարոզած բարոյականությունը։ Փիլիսոփայության հեղաշրջման պատճառով սկսում են պատմական անցքերը նոր չափերով չափել։ Հին հեթանոսական անվանված գաղափարները և վարդապետություններն արձագանք են գտնում նոր փիլիսոփայության մեջ։ Հին վարդապետություններից բուդդայականությունը մանավանդ գրավում է գիտնականների ուշադրությունն ու հարգանքը։

Բուդդայի իսկական անունը Սիդդարթա է[3]։ Նա ծնվել է Հարավային Հընդկաստանում[4] 560 թ. Քր. առաջ[5]։ Նրա հայրն կոչվում էր Շուդդուրանա[6], իսկ մայրը՝ Մայա[7]. առաջինը հարուստ և նշանավոր Շակիա տոհմից էր։ 29 տարեկան հասակում Բուդդան թողնում է հայրական տունը և իրեն փիլիսոփայական ուսման է նվիրում, իսկ հետո ճգնավոր է դառնում և իր իսկական անունը Գաուտամա փոխում[8]։ Շատերը նրան անվանում են Շակիամունի[9], որը նշանակում է «Շակիա տան ճգնավոր»։ Իր փրկության վարդապետությունը ստեղծելուց հետո նա իրեն անվանում է Բուդդա՝ «Լուսավորված»[10], կամ Տաթագատա՝ «Կատարելագործված»։ Մոտ 450 թ. Քր. առաջ Բուդդան իր ալևոր հասակում մեռնում է[11], սիրելի աշակերտներով շրջապատված։

Natura non facit saltus, ne mens guidem (բնությունը թռիչքներ չի գործում, նույնպես և հոգեկան կյանքը), ասում է նոր փիլիսոփայությունը, զարհուրանք պատճառելով այն հետադեմներին, որոնք բնության և հոգեկան կյանքի յուրաքանչյուր անկյունում հրաշքներ են պտրում։ Ինչպես բնության մեջ հազարավոր գոլորշիներ երկրից երկինք են բարձրանում, միասին ամպեր են կազմում և անձրև դառնալով՝ զովություն և կյանք մատակարարում բնությանը, նույնպես և մարդկության մեջ այս և այնտեղ ցրված գաղափարները միանում են մի որևէ անհատի մեջ, որը նպատակահարմար կերպով միացնում է այդ գաղափարները և դրանց օգնությամբ մի նոր միտք է արտադրում, որ ամառնային մեղմ քամու պես զովացնում է մարդկությունը։ Բուդդայի վարդապետությունը երկնքից իջացած հանկարծակի մի հայտնություն չէ, այլ հընդկական ոգու արտահայտություններից մեկը։

Բուդդայի ծնվելուց առաջ, դեռ հնդկական անտառներում ցրված կային փոքրիկ տնակներ, որոնց ալեզարդ բնակիչները բնության և գոյության օ-

բենքներն էին հետազոտում։ Սրանք քարոզում էին որ, ինչպես մարդիկ, այնպես և աստվածները, կենդանիները և բոլոր իրերը երևույթների շղթայի մասեր են։ Յուրաքանչյուր եղելություն կատարվում է համաձայն տիեզերական օրենքների, որոնց ենթարկված են նույնպես և աստվածները։ Յուրաքանչյուր պատճառ ունի իր հետևանքը և յուրաքանչյուր հետևանք իր պատճառը, ուստի հիմարություն կլինի հավիտենական վարձատրության գոյությունն ընդունել։ Տիեզերքի մեջ գոյություն ունի մի ընդհանուր ոգի՝ âtman *կամ* brahmân։ *Մարդկության նպատակը պետք է լինի ոչնչանալ և միանալ Բրահմանի (*Brahmân*)-ի հետ։*

Այդպիսի փիլիսոփայական վարդապետությունները վեդայական բազմաստվածության փոխարեն ընդունում էին Բրահմանի գոյությունը և այդ պատճառով անվանվում էին բրահմանականություն[12]*։ Վերջինը անտարբեր էր դեպի Հնդկաստանում տիրող վեդայական կրոնը և գործնական կերպով չէր պատերազմում հին աշխարհայեցության դեմ։ Սրա հակառակ՝ բուդդիզմը, որ բրահմանիզմի հետ շատ ընդհանուր կողմեր ունի, պատերազմական դիրք է բռնում դեպի վեդայական կրոնը*[13]*։ Բուդդայականությունը մերժում է Վեդայի հեղինակությունը, աստվածների երկրպագությունը և ժողովուրդը դասակարգերի բաժանելը։ Այդ ամենի փոխարեն Բուդդան քարոզում է* **վշտի և պատճառականության** (kausalität) *վարդապետությունը։*

Միայն անմիտ թեթևամտությունը,— ասում է Բուդդան,— կարող է չնկատել, որ կյանքը վշտով և թշվառություններով լի է։ Կենաց վշտերի դեմ փրկության բանալին գտնելու համար Բուդդան թողնում է հայրական տունը, սիրելի ծնողներին և ինքն իր մեջ խորասուզված՝ օր և գիշեր աշխատում է, որ իր նպատակն իրագործի։ Երկար տարիներ մտածելուց և աշխատելուց հետո, մի օր Բուդդան գալիս նստում է մի ծառի տակ[14] *և իր մտքերի մեջ խորասուզվում։ Հանկարծ՝ կարծես մի լույս է իջնում ուժաթափված փիլիսոփայի վրա և նա մտքի խորքում թափանցում և ըմբռնում է վշտի ծագումը։ Բուդդայի այդ գյուտը, որ անվանվում է բուդդայական շղթա, հետևյալն է՝*

անգիտությունից ծագում է գոյությունը,
գոյությունից—գիտակցությունը,
գիտակցությունից—զգայարանքները,
զգայարանքներից—նրանց շփումը արտաքին կյանքի հետ,
այդ շփումից առաջանում է ցանկությունը,
ցանկությունից—գոյության սերը,
այդ սիրուց—լինելը,
լինելուց—ծնունդը.
վերջապես՝ ծննդից առաջանում են ծերություն,
մահ, ցավ և վիշտ։

Փրկությունը նրանում է կայանում, որ անգիտությունը փոխարինվի գիտությունով, որպեսզի անգիտության բոլոր հետևանքները ոչնչանան։ Մարդկության գլխավոր նպատակը պիտի լինի ձգտել դեպի Նիրվանա[15]*, որովհետև Նիրվանան վշտերով լի գոյությունից ավելի լավ է։ Որպեսզի մարդկությունը այդ նպատակին հասնի, նա պետք է սանձահարե իրա կրքերը, դիտե բնությունը արվեստական օբյեկտիվ (անշահակից) բարձրությունից։ Մարդս սերտ կապված է պատճառականության օրենքների հետ, ուստի աստվածների մասին խորհելու փոխանակ, պետք է պատճառականության օրենքները, կամ բուդդայական շղթան ուսումնասիրության առարկա դարձնել։*

Աստվածներ ասելով ընդհանրապես հասկանում են զանազան դարերում

զանազան ժողովուրդներից զանազան ձևով ընդունված մի տիեզերական ուժ, որը աշխարհիս և մարդուս ղեկավարն է։

Մարդկության մի մասը աղոթքներով, զոհերով, իսկ ֆետիշապաշտները[16] մինչև անգամ ծեծով ուզում են աստվածներին հաճելի լինել, Աշխարհիս կրոնների մեջ բուդդիզմը միակն է, որ աստվածներ, զոհաբերություն և աղոթք մերժում է։ Այդ ամենը նա փոխարինում է տիեզերական օրենքով, որ ոչ ականջ ունի մեր աղոթքները լսելու և ոչ ստամոքս՝ մեր զոհերը ճաշակելու համար[17]։

Բուդդայի շրջապատողներից շատ քչերը հասկացան նրա քարոզածը։ Տասնեվիններորդ դարին էր վիճակված գնահատել Արևելքի փիլիսոփայի գյուտը։ Այդ գնահատողներից էին՝ Արթուր Շոպենհաուեր[18], Էդուարդ ֆոն Հարդման[19] և Լև Տոլստոյ[20]։

Ա. Շոպենհաուերը Բուդդայի ամենաեռանդուն հետևողներից մեկն է։ Նրա բուդդիզմի մեջ մտցրած փոփոխությունները անչափ [կարևոր] են, որ մենք նրան տասնեվիններորդ դարի Բուդդա ենք անվանում։ «Մարդուս մեջ ամենից էական հատկություններն են,— ասում է Շոպենհաուեր,— ցանկալը և ձգտելը, որոնք անշեջ ծարավի են նման։ Յուրաքանչյուր ցանկության շարժառիթն է կարոտությունը։ Երբ մարդու ցանկացածը հեշտ կերպով իրականանում է, այն ժամանակ նա զգում է ձանձրույթ և դատարկություն»։ Ա. Շոպենհաուերի կարծիքով, կյանքը թշվառությունների գործվածք է, հետևաբար մարդկության նպատակը պետք է լինի ձգտել դեպի բուդդայական Նիրվանա։ Շոպենհաուերի հոռետես աշխարհայեցությունը բազմաթիվ հետևողներ ունի։

Մեր կարծիքով, այդ բոլոր ապրելուց հոգնած անձնավորությունների սխալը կայանում է նրանց միակողմանիության մեջ։ Պեսիմիստները[21] մոռանում են, որ կյանքը՝ ոչ թե միայն վշտերի գործվածք է, այլ վշտերի և հաճույքների։ Ա. Շոպենհաուերի արժեքը նրանում ենք տեսնում, որ նա ենթադրությունների վրա հիմնած կրոնի փոխարեն իրա փիլիսոփայական սիստեմի մեջ ընդունեց բուդդայական գիտնական կրոնը, որը համառ կերպով քարոզում է, որ բնության բանալին, առասպելական անբնական հայտնությունների մեջ որոնելու փոխանակ, հենց իրեն բնության մեջ պետք է պտրել։ Այս նոր ճշմարտությունով լուծվում է կրոնական խնդրի մի կողմը, որով հայտնությունների կրոնները բնության հետազոտությունով են փոխարինվում, իսկ բազմազգեստ աստվածները՝ անվերջ տիեզերքով։

Կրոնական պրոբլեմի մյուս մասը կրոնական բարոյագիտությանն է վերաբերվում։ Այդ մասին մի ուրիշ անգամ։

Հ. ՄԵՆԵՆԴՅԱՆ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Հեկկել (Haeckel) Էռնստ (1834—1919)— գերմանացի դարվինիստ կենսաբան, Ինայի համալսարանի համեմատական անատոմիայի և կենդանաբանության ամբիոնի պրոֆեսոր։ Բնապատմական մատերիալիզմի և Չ. Դարվինի էվոլյուցիոն ուսմունքի տարածող, պաշտպանել է բնության նկատմամբ մատերիալիստական հայացքներ, խզել է կապերը եկեղեցու և կրոնի հետ։ Առաջարկել է պաշտոնական կրոնը փոխարինել բնության աստծու հավատով։

[2] Էվոլյուցիոն տեսությունը (կենդանի բնության զարգացման ուսմունքը) գլխավորապես մշակել է Չ. Դարվինը և դարձել դիալեկտիկական-մատերիալիստական աշխարհայացքի բնագիտական հիմքը։ Էվոլյուցիոն տեսության զարգացնողներն են Թոմաս Հեքսլին (1825—1891), Էռնստ Հեկկելը, Կ. Ա. Տիմիրյազևը (1843—1920) և ուրիշներ։

[3] Սիդդարթա—արտասանության ճիշտ ձևն է Սիդդհարթհա, որը բառացիորեն նշանակում է «իր կոչումն իրագործած»։

[4] Այստեղ թյուրիմացություն է. պետք է լինի Հյուսիսային Հնդկաստան։ Ավանդության

համաձայն Բուդդան ծնվել է Կապիլավաստու մայրաքաղաքին մերձ Լումբինի վայրում՝ Նեպալից ոչ հեռու (տե՛ս Г. М. Бонгард—Левин, А. В. Герасимов, Мудрецы и философы древней Индии, М., 1975, էջ 83):

[5] Մեկ այլ, առավել ընդունված տեսակետի համաձայն Բուդդան ծնվել է մ. թ. ա. 623 թվականին:

[6] **Ծուդդուրանա**—արտասանության ճիշտ ձևն է Ծուդդհոդանա:

[7] Մայա, ավելի ճիշտ է Մահամայա, որը նշանակում է «Մեծ Մայա»: Մահամայան մի անգամ երազում տեսնում է, թե ինչպես սպիտակ փիղը մտնում է իր կողը: Սրանից հետո Մահամայան հղիանում է և որոշ ժամանակ անց ծնում տղա երեխա՝ Բուդդային:

[8] Իրականում Բուդդայի իսկական անունը Սիդդհարթհա Գաուտամա է, «Բուդդա» անվանումը նրան տրված էպիտետ է, որն առաջացել է ավելի ուշ:

[9] Գրության ճիշտ ձևն է Ծակեյ-Մունի:

[10] Դրբեմն թարգմանվում է «պայծառամիտ», «պայծառության հասած»:

[11] Ավանդության համաձայն Բուդդան մահացել է Կուշինահարում, մոտավորապես մ. թ. ա. 488 կամ 486 թվականի մայիսին, շուրջ 80 տարեկան հասակում:

[12] Բրահմանականություն—հին հնդկական կրոն: Ծագել է մ. թ. ա. I հազարամյակում, արթագործել է հասարակության կաստայական կառուցվածքը: Բրահմանայականությունը կազմվել է աստվածային երրորդությունից (Բրահմա, Շիվա, Վիշնու):

[13] Նախնադարյան համայնական կարգերի քայքայման ու դասակարգային հասարակության ձևավորման ժամանակշրջանի հին հնդկական կրոնափիլիսոփայական ուսմունք: Վեդայականության կրոնական պատկերացումներն ամփոփված են չորս գլխավոր սուրբ գրքերում՝ Ռիգվեդա, Աթհարվավեդա, Սամավեդա և Յուջուրվեդա (մ. թ. ա. 12—7-րդ դարեր):

[14] Լեգենդի համաձայն, Բուդդան իր ուսմունքը հայտնագործել է Նաիրանջան գետի ափին՝ Ուրուվիլվայում, ներկայիս Բիհար նահանգի Բոդհ-Գայ վայրում (տե՛ս А. Н. Кочетов, Буддизм, М., 1983, էջ 11):

[15] Նիրվանա (բառացիորեն թարգմանվում է անշնչություն)—բուդդայականության հիմնական հասկացությունն է: Նշանակում է մարդու հոգևոր զարգացման վերջնական նպատակը, որը հասանելի է միայն ընտրյալներին, նրանց, ովքեր կարողանում են հաղթահարել ամեն մի ցանկություն և փափագ: Նիրվանայի կարելի է հասնել հինգ առաքինությունների (հավատ, արիություն, ուշադրություն, կենտրոնացում, իմաստություն) հետևողական զարգացմամբ (տե՛ս С. Радхакришнан, Индийская философия, т. I, М., 1956):

[16] Ֆետիշիզմ (թարգմանվում է որպես հմայիլ, թալիսման) լայնորեն տարածված է բոլոր կրոններում, այդ թվում նաև բուդդայականության մեջ:

[17] Հեղինակը նկատի ունի այն հանգամանքը, որ բուդդիզմը մարդկության փրկությունը որոնում էր ոչ թե սոցիալական վերափոխումների ու բնության ուժերի դեմ պայքարի, այլ բարոյական կատարելագործման մեջ: Իսկ սա կարելի էր ձեռք բերել միայն կյանքից հեռանալու, Նիրվանայի մեջ խորասուզվելու միջոցով:

[18] **Ա. Շոպենհաուեր** (1788—1860)—գերմանացի իդեալիստ փիլիսոփա, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր (1820—1832): Ա. Շոպենհաուերն իր հիմնական՝ «Աշխարհը որպես կամք և պատկերացում» աշխատությունում (հատ. 1—2, 1819—1844) զարգացրել է մետաֆիզիկական իդեալիզմը, ժխտել պատմական առաջադիմությունը, բացառել բնության և հասարկության գիտական ճանաչողության հնարավորությունը:

[19] **Է. Ֆոն Հարթման** (1842—1906)—գերմանացի իդեալիստ փիլիսոփա: Նրա «Անգիտակցականի փիլիսոփայությունը» (1869) աշխատությունը մեծ ազդեցություն է ունեցել իռացիոնալիզմի և վոլյունտարիզմի ժամանակակից դպրոցների վրա:

[20] Ռուս նշանավոր գրող Լ. Ն. Տոլստոյի (1828—1910) կրոնափիլիսոփայական հայացքների վրա որոշակի ազդեցություն են գործել նաև կոնֆուցիականության և բուդդայականության գաղափարները: Հայտնի է, որ Լ. Տոլստոյը հատուկ վերաբերմունք ու ակնածանք ուներ բուդդիզմի նկատմամբ: Նա պարբերաբար ուսումնասիրել է այն, և համարվում էր այդ կրոնի լավագույն գիտակներից մեկը Ռուսաստանում: Զգալի է բուդդիզմի դերն ու նշանակությունը Տոլստոյի ստեղծագործություններում: «Չարին չհակադրվելու», «չարին բռնությամբ չդիմադրելու» ռուս գրողի տեսությունը, անշուշտ, մեծ չափերով փոխառնված է բուդդիզմից (մանրամասն տե՛ս А. И. Шифман, Лев Толстой и Восток. М., 1971, էջ 118—125):

[21] Պեսիմիզմ (հոռետեսություն)—փիլիսոփայական աշխարհայացք, ըստ որի իրադարձություններն ընթանում են դեպի վատը: Սա արտահայտվում է հատկապես անկումային տրամադրությունների, թարոյ ու արդարության հաղթանակի նկատմամբ հավատի բացակայության մեջ: